

## Ն ե ր ա ծ ո թ յ ո ճ

ԱՀ ազգային վիճակագրական ծառայության «Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական եռամսյակային զեկույցը կառուցված է ԱՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. հունվարի 29-ին N1-Ն որոշմամբ ընդունված «2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ» մախատեսված ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, այլ կազմակերպությունների հաշվետվությունների, հաշվարկների և ԱՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից դրանց ամփոփման, ինչպես նաև մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվա-հրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամլո հաղորդագրություններ, վերլուծական զեկույցագրեր) ամփոփված նյութերի հիման վրա:

Որպես Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության վիճակագրական դաշտերի ներդաշնակեցման ուղղված քայլ՝ 1999թ. ապրիլից սկսած՝ «Արցախի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» վիճակագրական զեկույցները ներկայացվում են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» վիճակագրական զեկույցների մմանատիպ կառուցվածքով, որոնց բովանդակությունն էլ ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) կողմից մշակված՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» հատվածներին համապատասխան:

Եռամսյակային զեկույցներում ընդգրկվում է «Մեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը: Ներկայացված է նաև ԱՀ և ԱԳՀ երկրների որոշ վիճակագրական ցուցանիշներ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում ԱՀ ազգային վիճակագրական ծառայության հրատարակումների ցանկը:

«Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» եռամսյակային զեկույցների օրինակները պահվում են ԱՀ ազգային վիճակագրական ծառայության գրադարանում:

Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը իր երախտագիտությունն է հայտնում սույն վիճակագրական հրատարակման հիմքը կազմող տեղեկատվություն տրամադրողներին և ակնկալում՝ նրանց և այլ սպառողների՝ վիճակագրական հրատարակումների հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկությունները:

Արցախի Հանրապետության

ազգային վիճակագրական ծառայություն, 2018թ.

**«Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» եռամսյակային զեկույցների հատվածներում առկա նախնական կամ հաշվարկային ցուցանիշները հաջորդող հրատարակումներում կարող են ենթարկվել ճշգրտման, պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածը հնարավորություն չի ընձեռում սկզբնական տեղեկատվության արժանահավատությունն առավել խորությամբ ստուգելու, ինչի իրականացումը պահանջում է լրացուցիչ ժամանակ:**

### Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
տվյալներ չկան	--
չնշին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	X
տվյալները ճշգրտված են	#

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ: